Քաղաքային կոշտ թափոնների նախնական վերամշակման ծրագիր

Մրցույթ.

Վայր. Երևան, Հայաստան

Գործունեության ոլորտ. Թափոնների կառավարում

Ֆինանսավորման աղբյուր. Երևանի համայնքային բյուջե

Պայմանագրի տեսակ. Կոշտ թափոնների նախնական վերամշակման ծառայություններ

Ծանուցման տեսակ. Հետաքրքրվածության հայտի ներկայացման հրավեր (ՄՀՀ)

Հայտարարման օր. 17 փետրվարի 2017

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ. 15 մայիսի 2017՝ 17:00

Հետաքրքրվածության հայտի ներկայացման հրավեր

Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, որի բնակչությունը կազմում է մոտ 1 մլն մարդ, ովքեր գեներացնում են մոտավորապես 350.000 տոննա/տարի քաղաքային աղբ: Ներկայումս, թափոնների տեսակները խառնված են և հավաքվում են առանց որևէ նախնական տեսակավորման, ինչպես նաև առանց երկրորդական տեսակավորման՝ մինչև աղբավայր տեղափոխելը: Աղբի հավաքման ծառայություններն իրականացվում են մասնավոր կազմակերպության կողմից, որը տրամադրել է նոր աղբամաններ, բեռնատարեր և իրականցնում է 100% ծածկվածությամբ աղբահանություն: Ներկայումս, հավաքված խառը թափոնները չկանոնակարգված թափվում են տարբեր վայրերում: Այժմ Երևանի քաղաքապետարանը նախապատրաստում է մցույթ՝ ժամանակակից աղբավայրի կառուցման և շահագործման համար:

Հայաստանում առկա է վերամշակման ենթակա թափոնների առևտուր, որը կրում է ոչ պաշտոնական բնույթ, սակայն վերամշակման շուկան պատշաճ կերպով զարգացած չէ: Օրգանական և վերամշակման ենթակա նյութերի առանձին հավաքում չկա: Նախկինում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ թափոնների բաղադրության մեջ առկա է կենսաբանորեն քայքայվող թափոնների բավականին մեծ բաժին:

Երևանի քաղաքապետարանը մտադիր է բարելավել առկա կոշտ թափոնների ծառայությունների չափանիշները և կառույցների/միջոցների իրավիճակը: Քաղաքապետարանը մտադիր է նաև ոլորտի իրավիճակը բնապահպանական

համապատասխանելիության տեսանկյունից բարձրացնել և մոտեցնել եվրոպական չափանիշներին:

Այս ծրագրի հիմանական նպատակներն են՝

- Իրականացնել թափոնների վերամշակումը և վերականգնումը,
- Կրճատել կոշտ թափոնների կառավարումից առաջացած բնապահպանական և առողջապահական ազդեցությունները (թափոնների քանակի նվազեցում),
- Ստեղծել սոցիալական և տնտեսական շահույթ,
- Նվազագույնի հասցնել մնացորդային թափոնները, որոնք վերջում թափվելու են աղբավայրում,

Երևանի քաղաքապետարանն մեկնարկում է սույն չպարտավորեցնող հետաքրքրվածության հայտի հրավերը, որպեսզի մասնավոր-համայնք համագործակցության միջոցով (ՄՀՀ) իրականացնի կոշտ թափոնների վերամշակման ներդրումային ծրագիրը:

Սույնով հրավիրում ենք հետաքրքրված կազմակերպություններին առաջարկել ցանկացած հաստատված/փորձարկված հաջողակ և բնապահպանական տեսանկյունից ընդունելի տեխնիկական լուծում:

Մասնակիցները պետք է ունենան կոշտ թափոնների կառավարման, տեսակավորված թափոնների հավաքման և/կամ վերամշակման փորձ:

Քաղաքապետարանը կգնահատի ներկայացված առաջարկները բնապահպանական, տեխնիկական և տնտեսական տեսանկյունից՝ ելնելով վերը նշված նպատակներից: Այնուհետև կհայտարարվի ծառայությունների մատուցման միջազգային մրցույթ այն պարագայում, երբ Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով ներկայացված հայտերը, կորոշի, որ արդարացված է շարունակել այս ծրագիրը:

Առանձնահատուկ նախապատվություն կտրվի այն լուծումներին, որոնք քաղաքապետարանի համար կլինեն եկամտաբեր կամ չեն առաջացնի ծախսեր և առավելագույնի կհասցնեն կոշտ թափոնների վերօգտագործման և վերամշակման գործընթացները՝ ներառյալ կենսաքայքայվող աղբը:

Ընտրված կապալառուն պետք է նախնական վերամշակման ենթարկի առաջացած թափոնները (համաձայն մրցութային պայմանների) 15 տարի ժամանակահատվածում՝ պայմանագրի ստորագրման պահից սկսած: Կապալառուն պետք է ձեռք բերի ազգային օրենսդրությամբ սահմանված բոլոր թուլտվությունները, ինչպես նաև ֆինանսավորի, կառուցի/ապահովի և գործարկի կոշտ թափոնների ծրագիրը: Երևանի քաղաքապետարանը կապալառուին կտրամադրի կուտակված կենցաղային աղբը, իսկ աղբի վերամշակումից առաջացող նյութերը և վերջիններիս վաճառքից առաջացող եկամուտը կպատկանի Կապալառուին, որի մի մասն էլ, համաձայն կնքվելիք պայմանագրի պայմանների (եթե այդպիսի դրույթ ամրագրվի պայմանագրում), կվճարվի Երևան համայնքին:

Պայմանագրի ժամկետի ցանկացած երկարաձգում կիրականացվի կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հիմնված կլինի կատարված աշխատանքների բավարար արդյունքի վրա:

Ենթակառուցվածքի կառուցման համար կարող են օգտագործվել համապատասխան մասնավոր կամ հանրային տարածքներ (օրինակ՝ վերականգնված հին աղբավայր):

Պոտենցիալ ներդրողները/կազմակերպությունները հրավիրվում են ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը, որպեսզի հաստատվեն նրանց համապատասխան կարողությունները և փորձը.

- Կազմակերպության մասին տեղեկատվություն՝ անվանում, կարգավիճակ, հասցե, հեռախոսահամար, ֆաքս, հիմնադրման տարեթիվ, ծրագրի համար կոնտակտային անձ, էլեկտրոնային հասցե, մշտական և ժամկետային աշխատողների մասին տեղեկատվություն, փորձի ոլորտները, նախկինում նմանտիպ պայմանագրերի իրականացման հակիճ նկարագրություն:
- Նմանատիպ աշխատանքների/ծառայությունների ցանկ հետևյալ տվյալներով. ծրագրի անվանում, պատվիրատուի անուն և կոնտակտային տվյալներ, վայրը, իրականացման տարիներ, տեխնիկական լուծումների հակիրճ նկարագրություն (թափոնների տեսակներ, մշակման մեթոդներ և այլ), ամբողջ համակարգի կարողությունները և վերամշակման գործարանի կարողությունները, ֆինանսական արդյունքները պատվիրատուի համար (պատվիրատուի ծախսը կամ եկամուտը, միավոր գինը և այլն), պայմանագրի տեսակ և այլ համապատասխան տվյալներ լուծումների գնահատման համար: Այս ցանկին պետք է կցված լինեն հաստատող փաստթղթեր, ինչպիսիք են՝ պայմանագրեր, հաջող իրականացման և շահագործման երաշխավորագրեր և ալն:
- Տեխնիկական առաջարկ (առավելագույնը 20 էջ)՝ ներառյալ թափոնների տեխնոլոգիական վերամշակման տեխնիկական նկարագրություններ, թափոնների հոսքի մասին տեղեկատվություն, էներգիայի /վառելիքի /ջրի/քիմիական նյութերի պահանջների, վարձվող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվություն:
- Մոտավոր ֆինանսական առաջարկ (ներդրումները, քաղաքապետարանի համար տնտեսական արդյունքը, ժամկետները), ինչպես նաև իրականացված նմանատիպ ծրագրերի հղումներ/երաշխավորագրեր, որոնք կարող են հավաստել մոտավոր ֆինանսական առաջարկի իրատեսականությունը:

Հետաքրքրվածության հայտերը թղթային կամ էլեկտրանային տարբերակով պետք է ներկայացվեն հետևյալ հասցեով (անձամբ կամ փոստով) մինչև 2017 թվականի մայիսի 15 ժամը՝ 17:00 (տեղական ժամանակով): Հավելյալ տեղեկություն կարելի է ստանալ հետևյալ հասցեով, տեղական ժամանակով ժամը 10:00-ից մինչև 17:00:

Երևանի քաղաքապետարան

տիկին Նորա Մարտիրոսյանին, nora.martirosyan@yerevan.am
Հասցե՝ Բուզանդ 1/3, 5-րդ հարկ , 514 սենյակ
Հեռ՝ + 374 (10) 52-09-73

պատճենը՝

Երևանի քաղաքապետարան

պարոն Վարդան Կարապետյանին, vardan.karapetyan@yerevan.am
Հասցե՝ Բուզանդ 1/3, 5-րդ հարկ , 514 սենյակ
Հեռ՝ + 374 (10) 52-09-73

Municipal Solid Waste Pre-Treatment Project

Tender
Location: Yerevan, Armenia
Business sector: Waste Management
Funding source: Municipal Budget of Yerevan
Contract type: Solid waste pre-treatment works and services focusing on recycling and recovery
Notice type: Invitation for expressions of interest (PPP)
Issue date: 17.02 2017
Closing date: 15.05. 2017 at 17:00 (Yerevan time)

Request for Expression of Interest

Yerevan city is the capital of Armenia with a population of around 1 million that generates approximately 350.000 t/y municipal waste. At present, waste is commingled and collected without any primary source-sorting nor secondary sorting before final disposal. The collection service is performed by a private company that has provided new bins, trucks with a 100% waste collection. Currently the collected commingled waste is hap-hazardly dumped at various sites. The Municipality of Yerevan is in the process of preparing a tender for the construction and operation of a modern landfill.

Trade of recyclables exists in Armenia but it is on informal level, whereas recycling market is not properly developed. No separate collection is set up in regard to recyclable materials and organic waste. An indicative waste composition undertaken under a past project indicates a quite strong share of biodegradable waste.

Yerevan municipality intends to improve the standards of current solid waste services and facilities in Yerevan, as well as to increase environmental compliance in the direction of European principles and strategies. Therefore, the main objectives of this project are to:

- Implement waste recycling and recovery operations,
- Reduce environmental and health impacts of solid waste management (reduction of waste quantity),
- Create social and economic benefits,
- Minimize residual waste that is ultimately to be disposed at the new landfill,

Yerevan municipality proceeds to this non-binding Expression of Interest, so as to implement via a Private-Public Partnership (PPP) a sustainable solid waste pre-treatment investment project. Interested companies are hereby invited to propose any proven successful and environmentally acceptable technological solution. Participants are expected to have extensive relevant experience in solid waste treatment; source sorted waste collection and/or recycling. The Municipality will assess the solution from an environmental, technical and economical perspective that satisfies the above objectives. An official international tender for services will follow, should the Municipality of Yerevan decide that it is justified to proceed based on the submitted expressions of interest.

Particular preference will be given to solutions that entail profit or no cost to the Municipality and maximize diversion from landfill disposal by extensive reuse/recycling/recovery of materials including biodegradable waste.

The selected Contractor is expected to pre-treat (based on the conditions defined in the tender) the total generated quantity of waste for 15 years period from the signing of the contract. The Contractor will have to acquire all permits according to national legislation, as well as finance, construct and operate the solid waste project. The Contractor will be granted all revenues from the selling of produced outputs such as recyclables/energy/compost or others, but will also be responsible for the transport of residuals to the new municipal landfill. Part of such revenues could be considered as the profit of the Yerevan Municipality if such statement is included within the relevant contract. Any extension of the contract will be subject to satisfactory performance and will be based on mutual agreement.

For the construction of infrastructure, appropriate private or public (for example rehabilitated old landfills) areas can be used.

Potential investors/companies are invited to submit the following information in order to determine their relative capability and experience:

- Company profile: name, status, address, telephone number, facsimile number, year of establishment, contact person for the project, e-mail of contact person, number of permanent and part-time staff, fields of expertise, brief description of previous similar contracts;
- A list of references with similar works / services, with the following data: Title of project, name and contact details of the Client, location, years of implementation, brief description of the technical solution (kind of waste streams, treatment method etc.), capacity of the whole system and capacity of the treatment plants, financial results for the employers (e.g. cost or profit for the employer, unitary values etc.), type of contractual arrangements and any other relevant data for the assessment of the solution. This list will be joined by relative proof documents, such as contracts, reference of good execution and operation etc.
- Technical proposal (max 20 pages), including a preliminary technical description of waste process technology, waste flows, power/fuel/water/chemicals requirements, personnel to be hired;
- Indicative financial offer (investment, financial benefit for Yerevan Municipality, timeline), as well as referances from other relevant successful projectsthat can verify the reasonableness of the indicative offer.

The expression of Interest must be delivered in in hard copy or sent by e-mail to the address below (in person, or by mail) by May 15 2017 at 17:00 hrs (local time). Further information can be obtained at the address below during 10:00 to 17:00 hrs local time:

Yerevan Municipality

Ms. Nora Martirosyan
Address: Byuzand 1/3, 5th floor/514
Tel. number: + 374 (10) 520973
E-mail address: nora.martirosyan@yerevan.am

With cc to:

Mr. Vardan Karapetyan,
Address: Byuzand 1/3, 5th floor/510
Tel. number: + 374 (10) 520973
E-mail address: vardan.karapetyan@yerevan.am